

խաղը, որի նպատակը կլինի զարգացնել սովորողների պատմական հաղորդակցման հմտությունները :

Այնուհետև սովորողները բաժանվեցին 4 խմբի, յուրաքանչյուր խմբում 5 հոգի : Առաջին խումբը Հետազոտողներն էին և ուսուցչից ստացան հստակ հրահանգ՝ պատմական տարբեր աղբյուրներից օգտվելով տեղեկություններ հավաքել Միջնադարյան Ֆրանսիայի վերաբերյալ :

Երկրորդ խումբը՝ ուսուսասիրողներն էին, պետք է ուսուսասիրեին և վերլուծեին միջնադարյան Ֆրանսիայի դեպքերն ու իրադարձությունները :

Երրորդ խումբը՝ զբաղվում էր կազմակերպչական հարցերով՝ ինչպես ստեղծել խաղը, ինչ նյութեր օգտագործել և այլն :

Չորրորդ խումբը զբաղվում էր դիզայնով և համակարգչով նյութերի հավաքմամբ :

Սովորողները իրենց ստեղծագործ մտքի շնորհիվ աշխատանքների արդյունքում ստացան «Ժամանակի հետքերով» ուսուցողական խաղը, որը վերաբերում է միջնադարյան Ֆրանսիային : Նախագծի հանձնումը ուղեկցվեց անչափ հետաքրքիր, գիտելիքները ամրապնդող խաղի միջոցով : Նախագծային աշխատանքը ներկայացնելուց հետո ծավալվեց քննարկում, որի ընթացքում ուսուցիչների և աշակերտների կողմից հնչեցին հետաքրքիր առաջարկներ և գնահատականներ կատարված աշխատանքի վերաբերյալ :

Շնորհակալություն



